

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

(Հարության կուրիս թիւ 11-12, 1972, էջ 478-486)

13. «Ընդհանուր կանոն է որ ածականը գոյականին նես կը համաձայնի, երբ միավանկ է ... խոկ երբ բազմավանկ է, կը համաձայնի միայն յետադաս ըլլովու պարագային» (էջ 52); — Սա ևս մի սխալ յայտարարութիւն է: Դիմոնք Քերմականութիւնին ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ ամենավատահելի քերտկանութեանը. «Նախադասա ածականը նախդրիւ կը հալովի» (էջ 258), այսինքն՝ հալովով ու թուռվ չի համաձայնում գոյականին հետ. «Բայց երբեմն կրնայ իւր գոյականին հետ համաձայնիւ կամ մէկտեղ հալովիլ» (նոյն տեղում). «Երբեմն միւնոյն գոյականին երկու երեք նախադասա ածական որ ըլլայ՝ առաջին կամ վերջին ածականը գոյականին երկու երեք նախադասա ածական որ ըլլայ՝ առաջին կամ վերջին ածականը գոյականին նես կը համաձայնի, մասցածն անփոփոխ կը թողուի» (էջ 259, կանոն Դ.). և երկու դէպքում էլ օրինակների մէջ ունենք բազմավանկ ածականներ. ուստի ճիշդ չէ հեղինակի յայտարարութիւնը, թէ երբ ածականը բազմավանկ է, «միոյն յետպաս ըլլալու պարագային» կը համաձայնի: Արդէն հեղինակի սահմանած կանոնն ինքն իր մէջ սխալ է. իրը «Ընդհանուր կանոն է որ ածականը գոյականին հետ համաձայնի, երբ միավանկ է»: մինչդեռ ինքն իսկ առում է, թէ բազմավանկն է էլ համաձայնում: Խնդիրն այն է, որ նա անտեսել է «Նախադասա» բառը, որ առենալ դէպքում յիշատակուում է քերտկանութիւնների մէջ. հմմտ. «Բայսի մը միավանկ կամ երկվանկ» (որ հեղինակը նոյնպէս անտեսել է. Մ. Մ.) ածականներ, ինչպէս են սուրբ, մեծ, փոքր, նիմ, բարի, չոր, և այլն... նախադաս եղած առեն գրեք միշտ կը համաձայնին» (Քերտկանութիւն նայկազնեան լիզուի, էջ 259, կանոն Բ.): ուշադրութիւն գործնենք բնդգծած բառերի վրայ: — Միւս կողմից՝ ճիշդ չէ՝ «Խոկ երբ բազմավանկ է, կը համաձայնի միոյն մետպաս ըլլալու պարագային» յայտարարութիւնը, քանի որ յետպաս ածականը «կը գտնուի նոե չնամաձայնած» (նոյն քերտկանութիւն, էջ 259, կանոն Գ.): Մանաւանդ սկզնակներին ճիշդ կը լինէր սովորեցնել, որ գրաբարում ածականը, նախադաս կամ յատադաս, կարող է համաձայնել կամ չհամաձայնել իր գոյականի հետ:

14. «Մերեն մատուկ էին, խոկ զոր եսն զժի՝ առուի են» նախադասութեան (էջ 57) «եսն գտի» բառերը հեղինակը թարգմանել է «Ես ԶԱՅՆՈՒՅՆԻ» գտայց և առելացըրել է հետեւալ բացատրութիւնը. «ԵԵՍին կցուած ն դիմուրու յօդի է որ 'զանոն' իմաստը կու տայ, սակայն տանի որ ԶԱՅՆ («զորս, որոնք») բառը կայ արդեն, ուստի աւելուց է կրկնելը» (էջ 60, բացատր. 32). — Սխալ է թէ՝ թարգմանութիւնը և թէ՝ յօդի գործածութեան բացատրութիւնը: «Զոր եսն զժի» բառերը նշանակում են «ոռոնց ես գտայց» (արեմտահայերէն՝ «որ ես գտայց»): Ն յօդն այստեղ յիշեցնում է զոր յարաբերական գերանունի այնի կամ այնովիլ յարաբերեալը, որ լուելեայն կ'իմացուի. այսպէս՝ «իսկ այնովիլ, զորս ես գտի»: Հեղինակն իր սխալ բացատրութեանը առելացըրել է նեմոն օրինակ մըն ալ թագաւորք կամեցան տեսանել զոր գուբդի տեսանել (Թագաւորներ ուզեցին տեսանել՝ ինչ որ դուք կը տեսնեք), ուր Դ յօդը նոյնպէս կրկնութիւնն է ԴՈՒԻՔԻ» (նոյն բացատրութեան մէջ): Նախ՝ սկանաք, որ հեղինակի «նոյնպէս» բառի գործածութիւնն այստեղ անտեղի է, քանի որ յօդը

երկու օրինակներում նախադասութեան նոյն անդամի «կրկնութիւնը» չէ. առաջինում իբր ուզիղ խնդրի («գանոնք»), իսկ երկրորդում իբր սնթակայի («գուշ») կրկնութիւնն է: Երկրորդ՝ վերջին նախադասութեան մէջ, բայց այս անգամ դ յօդը նոյնակա յիշեցնում է լոհելեայն իմացուող յարաբերեալը՝ «Թագաւորք կամեցան տեսանել զայլ, զոր (աւալիլ) դուք տհասնէք»: Վերջապէս, հեղինակը իբ սխալ բացատրուցածին ընդհանուր կանոնով. «Գրաբարը, սուլոյի, իբ նախընտեկ» այլ յօդեր բայերուն լինել (ան քէ ենթականութեան): Օր.՝ Զօր ասեմքն բանիւ... միմիանս մինչդեռ զնային...» (սոյն բացատրութեան մէջ), նախ՝ նկատել տանք, որ տրուած օրինակներում Ա և Դ յօդերը չեն դրուել ենթականութիւնի վրայ լոկ այն պարզ պատճառով, որ գրանցում չունենք արտայոյնուած սնթականիր: Երկրորդ՝ տուեալ դէպքում գրաբարի նախընտրութիւնը բոլորովին այն չէ, ինչ ուսուցում է հեղինակը, այլ՝ այն, ինչ կարդում ենք Քերականներին, ՀԱՅԿԱԶՆԵԱՆ ԼԵԶՈՒԻ աշխատութեան «Յարաբերական բառերու հետ կապուած յօդառութիւն» վերնագրի տակ, էջ 297. «Գրաբարի մէջ չատ յաճախեալ ոճ է՝ յարաբերական բառէ մը անմիջապէս ետն եկադ բառին վրայ ս, դ, ն յօդերը գնել... Ասոնցմէ (այսինքն՝ յարաբերական բառերից. Մ. Մ.) ետքն եկած որեիցէ մասն բանի՝ կ'առնու ս, դ, ն յօդերը, թէպէտ հոլովուած անուն կամ գերանուն ըլլայ կամ խոնարհուած բայ, մակրայ, և այլն. Առ և այն բառերն որ երբեք յօդ չեն կրնար առնուլ...»: Տրուած են երեք էջ օրինակներ, ուր շի երեսում Պ Պէտիրեանի նշած վերոյիշեալ մտացածին «Նախընտրութիւնը»: Քերականութիւնը սովորեցնում է, որ «Յօդին այս գործածութեան մէջ ալ ճշդիւ կը պահուի երեք դէմքերու հետ համեմատութիւնն ու կապակցութիւնը: Դէմք ըսելով կ'իմանանք նաև տեղւոյ և ժամանակի յարաբերութիւնը, ներկայ կամ մօտուար կամ հեռաւոր» (էջ 297, կանոն 7): Եւ վերջապէս, ըստ քերականի, տուեալ դէպքում յօդի գործածութիւնը կապուած է յարաբերայի զեղչուած, կամ տոկայ լինելու հետ. բայց «Յօդին այս գործածութիւնն ազատ է. այսինքն եթէ յօդ չդրուի՝ սխալ չ'ըլլար, մանաւանդ ուր որ յարուենալ բուը ներգործութեամբ դրուած է... Բայց յօդը կ'աւելցուի վայելչութիւն, ոյժ և չատ անգամ բացայայտութիւն տալու համար» (էջ 299, կանոն 9): Յօդի նոյնպիսի սխալ բացատրութիւն է տուել Պ. Պէտիրեանը էջ 100, բացատր. 6. և էջ 192, բացատր. 11:

15. «Ճեղ ասեմ, այր քաջ Արատչէս» հանրածանօթ նախադասութեան այր բառի վրայ չետ դնիւով. հակառակ հրատարակութիւններու, նրա մասին հեղինակը տուել է հետեւալ երեակայական բացատրութիւնը. «Ընդհանրապէս առյօ մարդ, մարդ» իբ նօսնալիք, սուլոյի նոո յարմար և բարգնանել իբր բացանակութիւնն: «ո՛վ» (էջ 72, բացատր. 1): — Հեղինակի այս սխալը հաւանաբար դալիս է իբ ուսուցիչ Աշոտ Ա. Արրահամեանի հետեւալ սխալ բացատրութիւնից. իբր այր բառն այդտեղ Աւելագրութիւն է... իսկ երբեմն էլ դրում է առանց այդ (այսինքն՝ սիսը ցայց տալու. Մ. Մ.) անհրաժեշտութեան, որպէս աւելագրութիւն, ինչպէս այստեղ» («Գրաբարի ձեռնարկ», Երևան, 1964 էջ 409, ծան.

¹ Հեղինակը սովորաբար անցեալ անկատարով է խօսում գրաբարի մասին, այստեղ բացառութիւն է արել:

15). Այր բառն այստեղ ամենն ին աւելորդ չէ, և այր բայց Արտօնութեան բառը նշանակում են «քաջ տղամարդ Արտօնէս», ինչպէս թարգմանել է Ստեփանսս Մալխասեանը (Մալխան Խորենացի, Հայոց պատմութիւն, Երևան, 1940, էջ 118): Առանձին բառարանը մի գեղեցիկ բացատրութիւն է տալիս այր բառին՝ «մարդ ըսելու ժարդ, նաև՝ կարիճ, մեծ մարդ»։ այս բացատրութիւնները միանդամայն յարձար են այստեղ։

16. Իր թէ «Գրաբարի մեջ պարբերութիւնները ուս յանոխ» (ՔԱՆԶԻ) բառով կը սկսին, ու պարզապես խօսքը կցիլու միջոց է այս պարագային, ու չի բարգմանութիւն (էջ 75, բացատր. 1): — Գրաբարի քերտկանութիւնների և բառարանների մէջ հանգի շաղկապի մասին այսպիսի գիտազութիւն չէ արուած։ ուստի հեղինակի բացատրութիւնը անհիմն և անընդունելի է։ Այդ բառը նայնիսկ կարելի է թարգմանել եղիշէից մէջ քերուած հատուածում։ կարծում ենք, որ «Բանզի» ի բառաւու ազգին Արշակունացաց և յաջորդ տողերը՝ «և իրու զնա ևս մերժեաց ի թագաւորութեանէն» հիմունքի կամ պատճառի պարագայ են և՛ նախարարան Հայոց անկանէր թագաւորութիւնն» յայտարարութեան համար։

17. «ՈՐ ԸՆԴ ԶԵՄԱԼՄԲ ՆՈՐԱ» նախադասութեան ոռթիւ, ուր իրօք պակասում է ենի բայր, հեղինակը գրել է. «Գրաբարի մեջ ընդհանուր կանոն է ու եր նախադասութիւն մը կը սկսի ՈՐ յարբերականվ, եական բայր (Ե կամ ԿԱՅ) գիլուուի» (էջ 91, բացատր. 2): — Հեղինակն է սահմանել այս կեղծ «ընդհանուր կանոն»ը։ Այդպիսի կանոն չկայ, այլ «Եատ անգամ յարաբերականին (Եական) բայր զօրութեամբ կ'իմացուի» («Քերայանութիւն հայկական լեզուի», էջ 348, ի), Մեր հեղինակը «շատ անգամ» բառերը փախարինել է «ընդհանուր կանոն»ով։

18. Ներդրական «Ա» հոլովիչի մասին խօսելիս հեղինակը գրել է, թէ իրոք այն աւելանում է «Բառին (արմատին) ներօք, վերջին բաղադայնեն առաջ (եղեգն – եղեգոն)» (էջ 97, բացատր. Ա ՀԱԼԱՎՈՒԻՄ): — Բերուած և հոլոված օրինակներից է նաև հոլովիչին բառը, որի հոլովիչը արմատի վերջին բաղաձայնից առաջ չէ։ ուստի փակագծերում պէտք չէ աւելցնել «արմատին» բառը, որ կարող է թիւրիմացութեան տեղիք տալ։

19. «ՅՈՒՐԴԻՈՑ ԱՍՏԻ ԻՄՄԵ» բառերի առթիւ կարդում ենք հետեւեալ բացատրութիւնը. «ԱՍՏԻ, ային ԱՅՏԻ, ԱՆՏԻ՝ առանձինն՝ կը նեանեալին ժնուակե», «ՆՈՏԻԿԵ», «ՇՈՅՆԻԿԵ». ասկայն եր կը գործածուին բացառականով դրուած ու բիշ բառի հետ՝ պարզապես կը բարգմանուին «այս», «ռոյդ», «այն», «Օր»։ ՅՈՒՐԴԻՈՑ ԱՍՏԻ ԻՄՄԵ – «իմ այս զաւկես» (էջ 108, բացատր. 11): — Նույն խմբագրական կարգի երկու գիտազութիւն. 1) մեր ընդգծած շառանձինն» բառի փախարէն պէտք է ասուէր «բայրի հետ», քանի որ աստի, այսի, անսի բառերը առանձին չեն գործածուում, այլ բայրի հետ գործածուելիս են նշանակում «հոսկէ . . .» ևայլն Հեղինակն իր այս շառանձինն» բառով յիշեցնում է իր ուսուցչի «Գրաբարի ձեռնարկ»ի առնկայս գործածութեամբ» արտայայտութիւնը տուեալ դէպքում, (էջ 85) որ նրան թիւրիմացութեան մէջ է գցել։ 2) «Բացառականով դրուած ուրիշ բառի» փախարէն պիտի ասուէր «գոյականինի կամ փախանունի»։ — Մեր բառն, քերտկանական դիտազութիւնն այն է, որ սխալ է սովորեցնել, թէ աստի, անսի և այսի բառերը «պարզապէս» կը թարգմանուին «յա», «այդ», «այն»։ այսինքն միայն ցուցական ածականներով։ Այս հարցում հեղինակը շեղուել է իր ուսուցչի «Գրաբարի ձեռնարկ»ից, որի էջ 85ում (1964ի հրատ.) կարդում ենք. «Սակայն նման դէպքերում (այսինքն՝

«Գոյական - անունների հետ»: Մ. Մ.) նշանակութեամբ փոխարինում են ցուցական դերանուններին և ցուցական յօդերին»: Պ. Պէտիքեանը անտեսել է «և ցուցական յօդերին» բառերը: Աակայն Աշոտ Արքանամեանի խմբագրութեան սխալն էլ այն է, որ առաջին չեշտը դրել է ոչ թէ յօդերի, այլ ցուցական ածականների վրայ: Այս հարցի մասին «Քիրականութիւն հայլազին լիզուի» աշխատութեան մէջ կորդում ենք հետեւելը: Անուշաղը յօդի տեղ կը բանին ցուցական որոշեալ (տեղական) մակրայները, գէմքին և հոլովին համեմատ» (էջ 329): որոշեալ կամ տեղական մակրայներից են տափ, այսի և անի: Բազմոթիւ օրինակներից յետոյ առուած է: «Տեղական (որոշեալ) ցուցական մակրայները ցուցական գերանուանց տեղ կը գրուին՝ իրենց գոյականին հատգաս, — թէ՛ եղակի և թէ՛ յօդնեկի թուոյն մէջ» (էջ 338): Աակայն մի քանի օրինակից յետոյ աւելացուած է հետեւել գիտողութիւնը: Այս ցուցակամոկրայներուն ածական գերանուանց տեղ գործածութիւնը շատ յաճախեալ չէ (նոյն էջում), և տաղատակի երկրորդ ծանօթութեան մէջ: «Առոնք հասարակօրէն իբրեւ յօդ դրուած են գրոց մէջ և ոչ իրեն ցուցական գերանուն, ինչպէս թարգմանութեանց բնագիրը կը ցուցընէ», և բերուած են օրինակներ: Աւափի բացառական գոյականի հետ գործածուած տափ, անի և այսի բառերը մեծ մասամբ յօդերի նշանակութիւն ունեն, յատկապէս Մարկոսի աւետարանի «յարգւոյ տափի իմմէ» բառակապացութեան մէջ, ուր հեղինակը տափի բառը թարգմանել է «այս» — «իմ այս զաւկէս»: այզու առակի աւենութէրը, որ փոխարերաբար թերես Աստուած է, մէկ սրգի ունէր՝ «Յետոյ առաքեաց առ նոստ զորի իւր («իր սրգին») և ասէ: Թերեւ ամուշեցեն յարգւոյ տափի իմմէ»: այստեղ տափի բառը համազօր է Ա յօդին:

20. «Եթէ անցին վերային նիս Լինելլ բայր կը գործածուի՝ միշտ կրառարական կը կազմի» (էջ 119, բացար. 6): Հեղինակն է ընդգծել իր սխալ յայտարարառութիւնը, որ նոյնիսկ իր ուսուցչի «Գրաբարի ձեռնարկ»ին գէմ է: Արանում կարդում ենք. «Չի կարելի պնդել, որ անցեալ գերբայզգ և լինիլ բայց կազմուած գիտուոր ձեւերը միայն կրառարական նշանակութիւն կարող են ունենալ», և բերուած են օրինակներ (էջ 223): Աւելացնենք «Քերպարանի իման նայլազինոն լիզուի» աշխատութեան հետեւել տողերը: «Հայերէն լիզուի յատկութիւն է՝ որ միենոյն անցեալը թէ՛ ածական և թէ՛ միանգամայն ներգործական բայը ըլլոյ՝ իւր հայցական խնդրավե որ շատ հեղ հետն ունի... Ասկէ է որ ներգործական բացադրեալ ժամանակներն՝ եմ, լինիմ բայերով ու՝ հայցական խնդիր կառնուն: Նիւրեալ լիներ բարսւուն շարու իրւն: Գտեալ լինիմ զիւլուրիւն (գառած կ'ըլլոք)» (էջ 435, միշ): Այսպիսավ՝ լինիմ օժանդակ բայի հետ գործածուած ամէն մի անցեալ գերբայ կրառարական չէ, նոյնիսկ իմմէ բայը ներգործական սեսի է:

21. Եղիշէի «Եթէ հասեալ իցէ ժամանակ կենաց մերոց մահուամբ պատեհազիւս նախագասութեան մեր ընդգծած բառի մասին էջ 149ի 12րդ բացարարութեան մէջ առուած է: «Ներգորականի իմաս ունի, սակայն առանց ի նախլիրի, բան մի որ էիչ կը հանդիպի»: Աչ մի օրինակ կայն առանց ի նախլիրի, բան մի որ էիչ կը հանդիպի»: Աչ մի օրինակ կայն առանց ի նախլիրի, բան մի որ էիչ կը հանդիպի»: Առանց ի նախլիրի ներգոյական ոչ միայն «քիչ կը հանչէ առուած: Առանց ի նախլիրի ներգոյական ոչ միայն «քիչ կը հանչէ առուած: Գիտպի», այլ բալորզին չի հանդիպում բացի «գիշերի» ձեւեց: հմմտ Անթուան Մայէ, «Աւրուազիծ զասական հայերենի համեմատական ներկան» (Թրանսերէն), գիեննա, 1936, էջ 95, «Ներգոյականը միշտ

ուղեկցուած է նախդրով։ Նոյնի շաբաթ սկզբուար սնութեան եւ քանայիռութեան վերաբերող ուսումնասիրութիւններ» (Թրանսկրէն), Լիգոն, էջ 72, «Ներգոյականը երբեք չի հանդիպում առանց նախդրից Ռւսուի եղիշէի նախագահութեան մէջ պատերազմին բառը ներգոյական չէ, այլ՝ սեռական։ Երուանդ Տէր-Մինասոսկանը (Երևան, 1946, էջ 177) այն թարգմանել է «այս պատերազմում», որ ձիգ է նրա գրական թարգմանութեան մէջ։ «Սուրբ մահուամբ պատերազմիս» նշանակում է «այս պատերազմի (պատճառամ) սուրբ մահով»։

22. «Խակ թագաւորն Պարսից գարմացեալ . . . ընդ ազատութիւնն, զի ոչ ուրա ինչ նմա յոզգոս կանանցն բժնամանու նախագահութեան մեր ընդգծած բառերը բացարաւած են իրեւ «բժնամութիւն առնեն» (թշնամութիւն ընել կամ հանդէս րիրել) բային անցեալ կատարեալ» (էջ 205, բացատր. 12)։ — Զարմանութիւն, թէ ինչպէս հատուածի թելամանի բառը, որ ըստ գրաբարի բառարանների նշանակում է «նախատինք», բացարաւթեան մէջ դարձել է «թշնամութիւն»։ Շապուհը գարմանում է Հայոց Առաջեղ զօրավարի ազնուութեան, գրաբար՝ պատուիրեան վրայ, արովնեան «իրեն ոչ մի անուրգոնի հնասցըց կանանց վերաբերմամբ» (թարգմանութիւն Ստեփանոս Մայլխանեանի, Երևան, 1947, էջ 237)։

Այստեղ նշեցինք հեղինակի քերականական բացատրութիւնների մէջ տեղ գտած թերութիւնները։

Գրաբարի այս գասագիրքն ունի նաև ուրիշ թերութիւններ՝ 1) գաբրու բառերի սխալ բացատրութեան, 2) եերականական բացատրութիւնների ոչ յասով ձեւակերպման, 3) արևմտանոյերենի, 4) վարժութիւնների անհինեւողութեանութեան։ Եւ, վերջապէս, 5) կան վրիպակներե, որոնք չեն նշուած ևնկատուած կարեւոր վրիպակներուի ցանկում, էջ 243։ Ի միջի այլոց, նախընտրելի էր այս ցանկը դնել գրքի ամենավերջում, և ոչ թէ առարկայացանկից և բավանդակութիւնից առաջ։

1) Այսպէս օրինակ՝ յարիմ բառը, որ ըստ գրաբարի բառարանների նշանակում է «յարիլ, միանալ», էջ 66ում, բացատր. 11, բացարաւած է որպէս «դիմել»։ «Հոս» սահմանափակումը չի արդարցնում սխալ բացատրութիւնը։ Տե՛ս նաև վերեւում 20րդ դիտողութիւնը։ Կամ՝ էջ 26, բացատր. 12, «Զեմնէլլու Ա2 ինջ էր Աթնել»։ բառերի գիմաց գրուած է։ «Դարձուածք» — կարելի չէր օգնութեան հասնիլ։ ըստ բառարանի, ձեռնիսոս բառը նշանակում է «կարող»։ ուստի հոս ոչ մի գործուածք չունինք, և այդ բառերը նշանակում են «ոչինչ կրնար ընել»։ հեղինակի տուած բացատրութեան մէջ կարել է ձեռնիսա բառի իմաստը։

2) Բերենք բացատրութիւնների թերի կամ ոչ յատակ ձեռկերպման մի քանի օրինուկ։

ա) «ԽԲԲՈՒԻ, ԽԲԲԵՒԻ — նու՝ «երբ»։ Ուրիշ տիպի այս բառերը, ուրացյակերուցիք անիլի գործածական է, կրօնու Եօանակիլ՝ «իրեւ, որպէս, ինչպէս», «իրը թէ», «մօտաւորապէս» (էջ 26, բացատր. 3)։ — «Հոս» և «ուրիշ տեղեր» անորոշ արտայայտութիւնների փոխարէն պիտի տուէք, որ երբ իբրև կամ իբրու բառերը բային են վերաբերում, նշանակում են «երբ»։ Հայցական հոլովով (յաճախ որոշեալ հայցականով) գոյականին կամ գերանունին վերաբերելիս նշանակում են «իրեւ, որպէս, ինչպէս, պէս»։ թուականին վերաբերելիս նշանակում են «մօտաւորապէս», շուրջ»։

բ) «Ի Քին» — գույ անձնական դերանունին հզակի բացառականն է» (էջ 40, բացատր. 8): — Աւելորդ է «հզակի» բառը, քանի որ դուք բառն առանձին գերանուն է, և ոչ թէ դու գերանունի յագնակին, ինչպէս այսի յոգնակին է այս կամ այսոնիկ: Նոյնպէս անտեղի է և Ձենք ձեր մասի գրել, թէ «Դու անձնական գերանունին յոգնակի բացառարակուն է» (էջ 147, բացատր. 1):

գ) «ՇՆՄՌՀԵՍՋԻԲ» — ձեւով նոյն է, ինչ որ ՎերջԱխՈՐԵՍՋԻԲ, ատկան, առանց շետք, ապառնի իմաս ունի (էջ 45, բացատր. 22): — Գրաբարի քերականութիւնները սովորեցնում են, որ երկրորդ ապառնիի յոգնակի երկրորդ դէմքն է, որ չետ ստանալով գտնում է յորդորական հրամայական: Հեղինակի բացատրութիւնից հակառակ տպաւորութիւնն է ստացւում:

դ) «ՀԱՄԱՉԱԽԵՍԻԹԻՒՆ». Գրաբարի մէջ գոյականը եւ իր ածականը, այլիւ յատկացուցիչը (զերանուն) տա յանախ կր նամաձային թիւով եւ նույնով (աւելի նիշով՝ ածականն ու յատիցուցիչն է որ կր համաձային գոյականին նիս): (էջ 52): — Առանց սիթեսեթելու պէտք էր մի անգամից ռաւելի ճիշդուն առել աշակերտին և ուսուցչին: Բացի այս, փակազներում դրսում «գերանուն» բառը պէտք է փոխարինել «ստացական ածականով», քանի որ միւս բուն գերանունները իրեւ յատկացուցիչ գործածուելու դէպքում չեն համաձայնում իրենց գոյականի հետ: Հեղինակն այստեղ գործածել է «գերանուն» բառը, որպէսն արևելահայրէնի արդի քերականութեան մէջ գեռեա ընդունուած չէ «ստացական ածականոր»:

ե) էջ 161ում կարդում ենք: «Դրաբարի նիւրկան աշխարհաբարի ներկային վերածելու նամար կր բայէ որ առջեր ՚ԿԸ՛ աւելցնենք... (անըուշ անմօսն սորբերութիւններ կոն, ինչպէս՝ նովաթք՝ կր նովաթք, նովաթք՝ ԿԸ նովաթ և այլն)»: — Նախ՝ այդ տարբերութիւններն առնչան» չեն, թէ վիսե են: Կարծում ենք, որ «հոգանք» պիտի տպագրուէր հոգանքութեան վրիպակը: Իսկ էջ 171ում անցեալ անկատարի կազմութեան ժամանակ այդ առնչան տարբերութիւնները նոյնիսկ յիշատակուած չեն:

զ) Հեղինակի իսկ բառերով, «Ստորագասական հզանակի» տպառնիքն առաջինն իրը կազմում է սներկայի ձեհրէնը, «ուստի վերջաւորութիւններն ալ շատ նման են ներկային» (էջ 186): — Հայոստանում բարձրագոյն կրթութիւն ստացած «հայագէտը» (ինչպէս մամուլում նրան յորջորջել է Մելքոնեան հաստատութեան անօրէնը) պիտի առէր, որ առաջին և երկրորդ ապառնիները կազմում են՝ առաջինը՝ ներկայի հիմքից, երկրորդը՝ կասւելովի հիմքից, և ոչ թէ «ձեհրէից»: Ճիշդ, որ յարգին և յարդիցին ձեհրի տարբերութիւնը միայն — ից — ներմասնիքն է: Բայց ի՞նչ նմանութիւն կոյ նովամ ներկայի և նովայցեամ ապառնիի միջև: Ըսդհակառակն, նովաթք՝ «գարձել է» նովայնիք: այսինքն՝ կարծէք բայց իր լծորդութիւնն է փոխել: Ստորագասականի երկրորդ ապառնիի մասին էլ հեղինակը գրել է: «Այս ապառնիին ձեհրը, ինչպէս նկատելի է, անցեալ կատարեալի ձեւերէն կը կազմուին: Հմմտ, անց, կատ, ՅԱՐԳԵՑԻ — ապ, ՅԱՐԳԵՑԻ» (էջ 186): — Դարձեալ պէտք է առօւէր կատարեալի օհիմքէն» և ոչ թէ «ձեհրէնս»: Երկրորդ ապառնիի միայն եզակի առաջին դէմքն է կազմուել (բայց ոչ միշտ) անցեալ կատարեալի նոյն դէմքին գրմքն է կազմուել (բայց ոչ միշտ) անցեալ կատարեալի նոյն դէմքին առելանուով - ց՝ յարգեցի — յարգեցի: Իսկ հեղինակի օրինակի տը-

ւած թղթեր կատարեալի և թղթցես ապառնիի միջև ընդհանուրը միայն թղթ-հիմքն է, կատարեալի նիմքը և ոչ թէ ակատարեալի ձեերոից մէկը:

Է) Շատ անգամ յստակ չեն և շփոթութիւն են առաջ բերում նեղինակի յղումները կամ «տե՛ս»երը, որոնք տասնեակների հասնելով՝ ինքնին տաղակալի են: Այսպէս օրինակ՝ «Քաղաք» էր . . . թղթակիլորի ՈՒՄԵՄՆ - տե՛ս ի՛ք, դաս, ԱԲՆ ՄԵՌԶ էին» (էջ 137, բացատր. 1): — Տեսնամ ենք «աե՛սօք», ուր գրում է. «Ասիկա զրաբարի յատուկ կառաւցուածք մըն է. «Ական բայ + սեռական» եալլյն (էջ 65, բացատր. 1): Բացատրութիւնը եռատարղավ է, ուստի վերաբերում է նուև աշակերտին: բայց սա հաւանաբար չպիտի իմանայ, որ ունին բառաձեք («էք մագաւորի ուժեցին») տրական է, մինչդեռ ամե՛սօք կառաւցուածքի օրինակի մէջ՝ «առև միոց էին», և արուած բացատրութեան մէջ համապատասխան բառը ՍԵԽԱԿԱԼՆ, հարավ է: Թեերես ուսուցիչը զիտենայ այս հանգամանքը, բայց չկարողանայ պատասխանել աշակերտի հարցին:

Յ) Հեղինակը գասագիրքը շարագրել է արեմտահայերէն, բայց որոշ բառեր գործածել է իրենց արեկլահայերէն նշանակութիւններով: Այսպէս, էջ 8, բացատր. 6, ածեմ բայց թարգմանուել է «բերելո» և ազգիլո: արեմտահայ աշակերտի համար վերջին բայց նշանակում է «թաղնելու»: Ի միև առնումը թարգմանուել է «կռահել», զլիսի իյնուլո: երկրորդ բացատրութիւնը յատուկ է արեկլահայերէնին: Ի չմենդո առնումը թարգմանուել է «միամտացնել». միամիտ ձեռնուլ» (էջ 209, առաջատակի բացատր.): — երկու բացատրութիւններն էլ անիմաստ են Արեմտահայի համար, որ գիտէ, թէ միամիտ = պարզամիտ: Արեկլահայերէնում միահացիլ բառը նշանակում է «միտքը հանգստացնել», կոսկածը փարատելու: Բացի այս, ի չմենդո առնուլ գարգուածքը պատճառական կոմ ներգործական բայցի նշանակութիւն ունի, իսկ «միամիտ ձեռնուլ» բացատրութիւնը չեղոք բայցի նշանակութիւն ունի և սխալ է:

Արդեն բառը բազմիցս գործածուած է հեղինակի բացատրութիւնների մէջ անտեղի կերպավ, ինչպէս հետեւեալ նախագասութեան մէջ: «Մարդ բառը ունէր և մարդ յագնակին, որուն բացառականը արդեն կ'ըլլար և մարդոց» (էջ 34, բացատր. 5, ծան. 2), արեմտահայերէնում արդեն բառի նման գործածութիւնը կարող է թիւրիմացութիւն առաջացնել: Նոյնը պէտք է ասել նրա բազմաթիւ անդամ գործածութիւն արուած այլին բառի մասին:

Եկատելի են մեղանչումներ արեմտահայերէնի բերականութեան դէմ: օրինակ՝ «իմ ձեռքավ» (էջ 8, բացատր. 9), փոխանակ «իմ ձեռքավա»: «Բառերուն վրայ կը գրուին թիւեր» (էջ 37, վարժ. 1), փոխանակ «գրուած են», քանի որ այդ թիւերը արդէն գրուած են վարժանքների մէջ:

Գ) Տրուած ՎԱՐԺՈՒԹԻՒՆՆԵՐԸ մեծ մասամբ թարգմանական բնոյթի են՝ գրաբարից աշխարհաբար կամ հակառակը: Համազուած ենք, որ աշակերտները դրանց մեծագոյն մասը չպիտի կարողանան կատարել, քանի որ նրանք զինուած չեն լինում քերականական անհրաժեշտ, կունոնաւոր գիտելիքներով: Նրանց ամբողջ զիտելիքները վերածւում են նմանութիւնների «զգացողութեան»: Երբեմն այդ էլ չկայ. օրինակ՝ էջ 11ի 2րդ վարժութեան մէջ պահանջուած է աշխարհաբար թարգմանել «անզգամք» յոգնակի ուզզականը: իսկ մինչ այդ աշակերտը հանդիսել է միայն «աշկառնք» և «արեգակունք» յոգնակ իսւզզականներին, որոնք

միայն Ք յոզնակերտ մասնիկի յաւելումով չեն կազմուել, ինչպիսին է առնզգամքը: Նոյն տեղում պահանջում է նաև թարգմանել «ի տան իւրում», որի նմանը չի տեսնել աշակերտը մինչ այդ և, հետեւաբար, դրա պատճենութիւնը» չունի:

5) Վրիպակներ կան հատեսալ էջերում՝ 13, 41, 75, 95, 123, 127, 150, 160, 171։ Գիտակցական վրիպակ պէտք է համարել «Հայաստանի համալսարանները», քանի որ այդպիսիք չկան, կայ միայն Երևանի պետական համալսարանը։ «Վրիպակ» է նաև «հաստատութեան» բառը հեղինակի տիտղոսի մէջ՝ «Երևանի իլ Արօվեանի անուան Հայկական Մանկագործական Հաստատութեան»։

Մանրամասնօրէն քննելով Պետրոս Ա. Պէտիրեանի «Եջջի ՆԱԽ-ՆԵԱՅ, Գրաբարի դասագիրքոց՝ մենք դալիս ենք այն եզրակացւթեան, որ գրանում պակասում է քերականութեան հետեւղական, աստիճանական և կանոնաւոր ուսուցումը, որ անհրաժեշտ է որևէ օմնուծ», այսինքն՝ այժմ չխօսուող լեզու սովորելու համար. ուստի այս գասագրքով չի կարելի գրաբար սովորել բառիս բռն իմաստով։ Դասագրքում կան քերականուական սխալ բացարձութիւններ։

ՄԱՐՏԻՐՈՍ ՄԻՆԱՍԵԱՆ

ԵՐԱՎԱՐԴԻՄ